

Երեք օր անցաւ այս դիպուածին վրայ, Գագրիկ տխրութեամբ կը տեսներ, որ հայ իշխանաց շղթայները հանուած էին, չէր համարձակէր խօսելու պարզ եւ բարի շինականը, կ'իմանար, կը լսէր ամէն բան, ուրացեալ եւ մահմեդական ծառաներէ, որ կը պատմէին իրեն պանծանոք եւ կը յորդորէին, որ ինքն եւս թողու իւր սուտ կրօնքը եւ ընգունի ճշմարիտը: Իսկ նա աքն հրաւերներուն լռութեամբ միայն կը պատասխանէր եւ Գրիգորի ծանր տխրութիւնը իւր տգիտութեան միտարարութիւն կը համարէր: Անշուշտ, կ'ըսէր ինքնիրեն, խեղճ իշխանագունը այս վիճակին չի դիմանալուն յանձն կառնու ուրացութիւնը, այս անիծած կեանքին ինձ պէս շինական մը հագիւ կրնայ դիմանալ. իսկ սա՝ փափկասուն տղայ՝ հալեցաւ ոսկոր ու կաշի մնաց, սա, որ վարդապետի պէս ամէն ճշմարտութիւն կը ճանչէր՝ այդ տխրութեամբ կը վկայէ, որ ճշմարիտ զուտ կրօնքը մեր հայրենականն է. ինչ ողորմուկ աչօք կը նայի այդ կրօնուսոյց մօլլային, որ կ'ուզայ առասպելներ խօսելու. բայց այդ Կամսարական իշխանը... բան մը կը մտածէ. ինչ է իր մտածութիւնը. երեսն բան մը իմանալ կարելի չէ. երբեմն յանկարծ՝ կեցած տեղը կը ժպտի՝ այնպէս ժպիտ մը, որ կարծես թէ բոց կելնէ աչքերէն: Տեսնենք վերջը թէ ողջ մնացինք»:

Նոյն գիշերը Սուրբնի անթափանց կերպարանքը այլայլութիւն մ'ունէր, կը մտնէր, կենէր, կը նստէր եւ չէր կրնար նստել, կը շրջագայէր դուրս կ'երթար մեծ պարտեզը պատեղուն տակ, ախոռներուն այցելութիւն կ'ընէր, ուր ծիւր եւ ուրիշ կենդանիք եւ երկու անասնապահք միայն կային, եւ մէկ կողմ փլփկած ախոռ մը կար, ուր ինք բոլոր տարին ինչ խռիւ որ բերած էր քամին՝ ժողուած էր, հոն կ'երթար եւ կ'ուզար. Գրիգոր պառկած տեղէն կը դիտէր այդ իւր ել եւ մուտքը եւ իր քունն թեպէտ փախած՝ բայց չուզելով իւր տխուր սիրտը յայտնել, քուն ձեւացաւ: Գիշերն արդէն յառաջացեր էր, ամէնքը քնած էին, եւ Սուրբն մօտենալով եւ զգրիգոր զննելէն յետոյ՝ վառեց իւր ճրագը եւ ամէն զգուշութեամբ ելաւ դուրս. շտկուեցաւ դիմացի սենեակը, որ նոյն դիրքն ունէր դռան քով, եւ, որուն խորը Սուրբն այն մեծ քարն ցցուցեր էր իրեն: Կը լսէր Գրիգոր կամաց ձայնով խօսակցութիւն մը, կ'երեւակայէր թէ Գագրիկի հետ կը խոսէր. բայց դարձեալ չի շարժեցաւ տեղաց, եւ ամէն ձայն անհետացաւ: Վերջապէս երբ ժամէն անելի անցաւ, հետաքրքրութիւնը. զօրացաւ, ելաւ կամաց մը եւ տեսաւ թէ ոչ ոք չի կար. երկուքն էլ անհետ եղած էին:

Ուրբի վլայ այդ բաց դռան առջեւ, զօր չէին գոցեր անապատի զաւկները, տեսաւ, որ կանանոցի դուռը բացուեցաւ եւ Էսմա դուրս ելաւ նոյն զգուշութեամբ. սկսաւ շատրուանին չորս կողմը պտըտիլ, իսկ Գրիգորի սիրտն սկսաւ բաբախել, երբ կը տածէր թէ այդ յանդուգն աղջիկը կրնայ մինչեւ իւր սենեակը գալ եւ յանկարծ Սուրբնի գաղտնիքը, որ ինք նաեւ կատարեալ չէր